Միսաք Մեծարենց

Ցայգանվագ

Կուգա սիրերգն հեղեղատին

անտառներու մեջ մենիկ,

երբ ժըխորներ պահ մ’ընդհատին,

հասնի գիշերն երջանիկ.

Արևելքի գիշեր մը ջինջ,
շափյուղազարդ երկինքով,
ուր հեշտություն է ամեն ինչ,
ամեն իր լի բուրմունքով:

Ծառաստվերի տակ սխրալի,
բուներուն մոտ ու հեռու,
ջինջ հեղեղը կը թավալի
արծաթացող լույսերու:

Ու կը շրջի անտես ոգին
հոն անտառի ծառերուն՝
խարշափն որոնց թույլ, հեշտագին,
կը նվագե օրորուն:

Պիշ կը դիտեմ սաղարթախիտ
արահետները նրբին,
ու երազներս ականակիթ
հետզհետե կը թափի՛ն…

… Դեռ մինչև ե՞րբ, ըսե՛, հոգիս,
դեռ մինչև ե՞րբ տառապիմ՝
պրպտելով անրջանքիս
թոշ ծաղիկը մտերիմ:

Գուցե վաղը մթնե հոգիս,
գուցե դո՛ւն ալ թարշամիս,
մ’եղծեր հրմայքն անրջանքիս
ու ծաղիկը պաշտումիս…